

զբեկնի արձակեցի զոստս իմ, եւ ոստք իմ, ոստք փառաց եւ շնորհաց» (ԻԴ. 22): Այս կողմի բոլոր տուն-կերը ամբան եղանակին արեւմտեան հովին պատճառաւ արեւելք կը հակին. բեկնին միայն արեւմուտք հակած է այն ճանապարհին վրայ, ուրկէ անցած է Յիսուս:

Այս ծառին փայտը շատ յարգի է, մանաւանդ սպանիացի ազնուականներուն մօտ. նոյն փայտը կը-րակի մէջ գնելէ յետոյ անոր ջուրը կը խմցնէին ջեր-մոտներուն որոնք կը բժշկուէին (Մար. Ա. հատ. էջ 362-363):

ԺԶ. դարուն անանուն ուղեւոր մը կը գրէ թէ ե-րուսաղէմի եւ Բեթղեհէմի միջեւ կար նշենի մը, որուն տակ՝ կ'ըսեն թէ Ս. Կոյսը սովորութիւն ունէր նստե-լու Բեթղեհէմ երթալու եւ վերադառնալու ժամանակ (P. E. F. 1926, էջ 24):

Ս. Մարիամն ջրհորը. — Ս. Եղիայի վանքը հասնելէ առաջ՝ որ աւատական բերդի մը նման ճանապարհին գիմացը կը ցցուի, ձախին կը հանդիպինք ջրհորի մը զոր արաբները կը կոչեն Պիր եղ Քասիւմ: Այս բառը որ արաբերէն չէ, եբրայեցերէն Qadashim բառէն յա-ռաջ կուգայ որ կը նշանակէ տուրք մարդիկ, կամ յու-նարէն kathisma բառէն որ կը նշանակէ արոտ կամ սեղի հանգստեան: 530 ին թէոդոս սարկաւազէն պատմուած աւանդութեան մը համաձայն, Ս. Կոյսը հոս հանգըս-տացած է երբ Ս. Յովսէփին հետ Բեթղեհէմ կ'երթար: «Այս ջրհորին մօտ» 570 ին Անտոնինոս ի պատիւ Ս. Կուսին եկեղեցի մը գտած է. ասոր մէջ է որ ժամա-նակ մը թէոդոս մենակեացը պաշտօն վարեց, 460 ին Բեթղեհէմի արեւելքը՝ այրի մը մէջ ճգնողական կեանք վարելէ առաջ: